Հասցեատեր՝

«Ուրարտու ՖԱ» ՄՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcurartu.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10.10.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	17Բ-031
Խախտում՝	1. «Ուրարտու-09-2» թիմի գլխավոր մարզիչ Հակոբ Հայրապետյանի (12384) կողմից ոչ մարզական պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ե, 28-րդ կետ) 2. «Ուրարտու-09-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Աղայանի (30637) կողմից հայհոյելը մրցավարի հասցեին (Հավելված 1 Զ, 17-րդ կետ) 3. «Ուրարտու-09-2» թիմի ֆուտբոլիստ Աշոտ Մաթևոսյանի (35006) կողմից հայհոյելը մրցավարի հասցեին (Հավելված 1 Զ, 17-րդ կետ) 4. «Ուրարտու-09-2» թիմի երկրպագուի կողմից խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ անհարգալի արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ե, 23-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 17տ. մանկապատանեկան առաջնություն
Խաղ՝	«Արարատ-08» - «ՈՒրարտու-09-2», 06.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Ուրարտու-09-2» թիմի գլխավոր մարզիչ Հակոբ Հայրապետյանի (12384) նկատմամբ որպես պատասխանատվության միջոց

կիրառել «Նկատողություն»: «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

2. «Ուրարտու-09-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Աղայանին (30637) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 6-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:
3. «Ուրարտու-09-2» թիմի ֆուտբոլիստ Աշոտ Մաթևոսյանին (35006) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 6-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:
4. «Ուրարտու ՖԱ» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

Նկատողություն ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված

համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:

- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: